Մարութայ պանձը Աստուածածին.

Խաչն պատարագին, վեր աջ թեւին:

Ինկաւ մէջ Մարայ մէլիքի խեծլին, ըսկսաւ մարդ կարեց, որ արուն ըսկսուն լերթաւ[1] թաւ-ձրացաւ, սաղ մարտեր կիրքը-վէրին մէջ, չեն կանայ գեալ տիւրս:

91. Առքի մէջէն մէկ մարդ մը տիւրս էլաւ, մէկ գեալ[2] զարկեց մէկ ականջ, մէկ էլ միւս ականջ, կանչեց. «Տաւիթ փոշ, փոշ»:—Տաւիթն ասեց. ձիկ դէշ խապար կասես, ինչ ասել է փոշ:—Մարդն ասաց. քե դէշ խապար չեմ ասե. ասել կուզեմ, թէ քրոյ ձին դատրցաւ, որ ինոր քեամին ձիկ չթալի, գեամ քե մէկ խապար տի ասեմ: Երբ մոտացաւ, ասաց. «Տաւիթ էս մարդեր խէրիք ջարտես. քրոյ տիւշման կէս պառկեր ի կապատ վրանի տակ, քեասուն կիտր առճիճ տրե վեր ուր որտին. էն դեսի որ նաֆաս կիտանի, առճիճ կրանձրանայ չում վրանի առիք. էն դեսի որ նաֆասն կքեաշի, առճիճն կիջնայ վեր ուր որտին»:—Տաւիթն ասաց, ես չեմ գիտէ, որ վրանի տակն ի: Մարդն ինկաւ առջև, տարաւ նշանց խաւ:

92. Տաւիթ կայնաւ վեր վրանն՝ արան, տէսաւ որ մէլիքն պառկեր ի. եօթն աղջիկ էլ ինոր չորս բիւլոր նստած ոտքեր կմաշեն:[3]—Տաւիթն ասաց. վեր խանէք էտայ ձեր աղէն:—Ինոնք էլ ասին. հալայ եօտն օր վաղտայ կայ, որ էն արթնայ: Տաւիթն էլ չխամբեցեց, քաշեց մզրախ. զարկաւ մէլիքի կրունկ ծակեց, կիտր մը աղ լցուց մէջ եարին: Մէլիքի ոտը որ մռմռաց, կծկեց ասաց. «Ա՛ղջիկներ, էս տեղ լիւ կայ. իմ քիւն խառանցուցին:—Տաւիթ մէլիքին ասաց. էլե վեր, լիւ չի, լվի ախպէրն ի:

93. Մէլիքն էլաւ վեր տեսաւ, որ արընտ մարդ մը կայնե ուր տիմաց, գիտաց որ Տաւիթ ոպանողն ի, ելե որ խլդաթ[4] առնի: Մէլիքը ասաց.

«Օրհնեա՛լ է բարերար Աստուած. խնամք շատ էր մեծ թագաւորուն:

Թէ որ տիւ արևելքէն ես, տամ քե վաշութեն:

Թէ որ արևմտէն ես, տամ քե խաղինայ:

Թէ որ հիւսիսայէն ես կամ հարաւայէն, տամ քե տէօլվաթ[5]:

94. Տաւիթն վէրուց ասաց: «Օրհնեա՛լ է բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն. ես քրոյ տատծներէն, մէկն ալ չեմ, և ոչ քրոյ երկրներէն. ես Սասնու Տաւթի մշակներէն եմ. տիւ քե անմախ կկարծես, ես քե մախ իկեր եմ»:

---

1 Լեարդի պէս պնդուել: 2 Փուշի տեսակ: 3 Խոյեցիք տատմ են մատեր—ծիրեր: 4 Պարգեւ. նուէր: 5 Հարստութիւն: